

ԴԱՏԱԲՈՐ ԱՐՄԱՆՏ ԱՐԱՊԵԱՆ ԵՒ ԱՆՈՐ ՏԻԿԻՆ ՆԱՐԻՒՐ ՆԱԶԱՐ ՏՈՒԱՐ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ Ս. ԳԱՅԻԱՆԷ ՎԱՆՔԻ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ՆԱՄԱՐ

Գոհունակությամբ կը փափաքինք յայտարարել, թէ Պապուարժան Դապաւոր Արմանը Արապեան եւ Տիկինը՝ Նէնսին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին փութած իրենց խոսքովն կատարելով, հարիւր հազար փութարի նուիրապրութիւն մը կատարեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ ի նպաստ Սուրբ Գայիանէ վանքի նորոգութեան:

Դապաւոր Արապեան վերջերս ուխտաւորաբար եկավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եւ հանդիպում մը ունեցաւ Վեհափառ Հայրապետին հետ: Նորին Սրբութիւնը գնահատելով Հայց. եկեղեցոյ իր մատուցած ծառայութիւնը եւ յարկապէս Սուրբ Գայիանէ վանքի նորոգութեան բարերարութիւնը սպանձնելը, զինք պարգեւաւորեց «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» շքանշանով (տնն «Էջմիածին», Է, էջ 5):

Արդարեւ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կողմէ, շքանշանի պարգեւաւորման արարողութիւնը փեղի ունեցաւ Յուլիս 23-ին, Վէն Նայսի Սուրբ Պետրոս Հայց. եկեղեցոյ մէջ՝ ձեռամբ Արեւմտեան թեմի բարեխնամ առաջնորդ Գերշ. Տ. Յովնան արքեպս. Տէրպուրեանի, մասնակցութեամբ հոգեւորականներու եւ ի ներկայութեան յարկապէս հրաւիրուած հիւրերու:

Կը փափաքինք նաեւ յայտնել, թէ հանգստեան կոչուած Պապուարժան Դապաւոր եւ Տիկին Արապեան նիւթապէս օժանդակած են Արեւմտեան թեմին, ինչպէս նաեւ կախաւորած են Սուրբ Պետրոս Հայց. եկեղեցոյ «Հարսին Սենեակ»ը եւ զեւրելել փութած են Հայաստանի Հանրապետութեան դրօշը եկեղեցոյ մուտքին: Տիկին Նէնսի Արապեան Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմնի անդամ ըլլալով, փարիներէ ի վեր օգտակար կը հանդիսանայ Առաջնորդարանին: